

## ԽԵԿ-ի սեռացանկության ճիշտ ժամկետի որոշումը

Շատերի մոտ հարց է առաջանում, թե ինչպես ժամանակին ու ճիշտ հայտնաբերել կովի մոտ սեռացանկության ի հայտ գալը: Դրա համար պետք է իմանալ և խիստ ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

- Կովերի սեռական ցիկլերը կարող են կրկնվել ամբողջ տարվա ընթացքում, բայց առավել ուժեղ են արտահայտվում գարնանն ու աշնանը
- Առողջ կովի մոտ սեռական ցիկլը կրկնվում է ծնելուց 19-25 օր անց
- Սեռացանկությամբ կովի մոտ նկատվում են արտաքին սեռական օրգանների այտուցվածություն
- Սեռական օրգանների լորձաթաղանթները դառնում են վարդագույն
- Նկատվում է թափանցիկ լորձի արտահոսք
- Սկզբում տվյալ կովը ցատկում է այլ կովերի վրա, այնուհետև թողնում է իր վրա ցատկեն

Այսպիսով՝ թափանցիկ լորձահոսքի հայտնաբերումից 16-18 ժամվա ընթացքում անհապաղ պետք է սերմնավորել, քանի որ առանց ձվազատման կենդանին չի հղիանա, իսկ ձվազատումը լինում է հոսքի սկսվելուց 22-27 ժամ անց, բացի այդ սերմնաբջիջներն էլ իգական սեռական համակարգում կենդանի են մնում 36-48 ժամ: